

ԱՐՀԱՄԱՐՀԱՆ-ԸՆ ՀԱՅՈՑ ԸԱՐԺԱՍԱԿԱՆ ՀՈՍԱՆԻՇՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ե. Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հանրության անդամների շփման ընթացքում, վարքածևերին համապատասխան, ձևավորվում են որոշակի փոխհարաբերություններ, որոնք միմյանց նկատմամբ վերաբերմունք են պայմանավորում: Վերջինս կարող է լինել դրական, չեզոք, բացասական և, բնականաբար, արտահայտվել նաև հնչյունական կամ շարժումային լեզուներով: Առաջին դեպքում բառերի միջոցով գնահատականներ են տրվում կոնկրետ անձնավորությանը, նրա գործողություններին, հատկանիշներին, երկրորդ դեպքում, իբրև վերաբերմունքի դրսևորում, բառերին փոխարինում են շարժույթները: Մույն հողվածում մեզ հետաքրքրում է բացասական վերաբերմունքի մի դրսևորումը, երբ հանրության մի անդամը չի հարգում մի այլ անդամի, չի արժևորում, կարևորություն, նշանակություն չի տալիս մյուսի հատկանիշներին, գործողություններին, այսինքն՝ արհամարհում է նրան: Ի՞նչ դրդապատճառներ այստեղ կարելի է նշել: Ինչպես կտեսնենք հետագա շարադրանքից, նախ դրանք կարող են լինել առարկայաբար (օբյեկտիվորեն), երբ մի անձնավորության վարքը, հատկանիշները, իրոք, անհամեմատ պակաս գնահատելի են, քան մույն աստիճանակարգում եղող մեկ ուրիշինը. ոչ առարկայաբար, երբ մեկը անհամեմատ պակաս գնահատելի է մեկ ուրիշի տեսակետից, պատկերացմամբ միայն՝ պայմանավորված հասարակական կարգավիճակների խիստ տարբերությամբ (ներքին աստիճանակարգում եղողը թերագնահատվում է, եթե անգամ հատկանիշներով չի զիջում կամ գերազանցում է վերևում եղողին), սառն, հակակրանքի, ատելության հարաբերություններ հաստատվելիս: Վերջապես, դրդապատճառը կարող է լինել նաև եսաբուխ-հոգեբանական՝ ինքնահաստատման, ինքնաքաջալերման, պարզապես իր գործողություններին ազատություն տալու համար և այլն: Որքանո՞վ է արհամարհանքը բարոյական, տգեղ կամ անհրաժեշտ. սա այլ խնդիր է և դուրս սույն հողվածի շրջանակներից: Մենք քննության կառնենք հայոց շարժումային լեզվում արհամարհանքի հոմանիշային շարքը, դրա արտացոլման պատկերը մեր հնչյունական լեզվում:

Ըարժասության (ժեստիկուլյացիա) մեջ արհամարհանքն արտահայտվում է տարբեր եղանակներով, որոնցից յուրաքանչյուրն ունի սեփական հիմնապատճառը և դրանով պայմանավորված շարժույթները (կիներմա): Ելնելով նշվածից՝ հոմանիշները մենք կբաժանենք չորս խմբի, որոնց վրա կանգ կառնենք առանձին-առանձին:

1. Հրաժարում շփումից: Մույն խմբի հիմնապատճառն այն հոգեվիճակն է, երբ անձերից մեկը չի ցանկանում շփվել, հաղորդակցվել (անգամ բարևել) մեկ այլ անձի հետ: Այս մղումով դիմում է այլևայլ գործողությունների, որոնցից մեզ հետաքրքրում են նրանք, որոնք վերածվել են արհամարհանքի արտահայտման ստերեոտիպերի՝ շարժույթների: Դրանք երկուսն են՝ «դեմքը մի կողմ դարձնել» և «մեջքը դեպի մեկն անել»: Առաջինը, որովհետև շարժանք է, համեմատաբար մեղմ է. բավական է մի պահ դեմքը թեթել դիմացինից աջ կամ ձախ՝ հայացքն այնուհետև շեղելով նրանից:

Հայերենում շարժույթն արտացոլող կայուն բառակապակցություններում շարժումը ցույց են տալիս՝ դարձնել, թեթել, ծռել, շրջել, շուռ տալ բայական բաղադրիչները, որոնց հետ, որպես գերակա անդամ, հանդես են գալիս՝ գլուխ, դեմք, երես, քիթ, պոռունկ գոյականները: Այսպիսով ունենում ենք. գլուխը դարձնել, գլուխը ծռել, դեմքը թեթել, երեսը շրջել, քիթ ու պոռունկը շուռ տալ ու նման բաղադրիչային զուգորդություններով առնվազն 40 կառույց: Վերջիններս միմյանցից կարող են տարբերվել նաև լրացուցիչ բաղադրիչներով, որոնք ցույց են տալիս շարժման ուղղությունը՝ հետ, մի կողմ, անդին, դեպի պատը (պատին): Այժմ

բերենք օրինակներ: «Վարդուկն էր, որ հեռուէն կը դիտեր զինքը աստերոթյան բոռն արտա-
 հայտութեամբ սը: Տիկին Բեհեզյան տեսավ զայն և արհամարհառ ձևով մը *զուխը դարձուց*,
 առանց բարև ելու» (Միսիկ): «Կանգ առավ մի բավական մեծ ավառքուս, և ուղևորները եր-
 գեղով սկսեցին վար իջնել: Մերոնց դեմքով վայրկեանապես ինչ-որ բան անցավ, իսկ ոմանք
զուխները արհամարհանքով ծռեցին.- Երգածնին ալ երգ ըլլա...» (Միլվա Կապուտիկյան):
 «Գտավ Ծածառին: Ծածառը *արհամարհանքով դեմքը բերեց* և ասաց նույնը.- ոչնչու-
 բյուն» (Չոքայր Խալաթիյան): «Եկավ Արմենը... մի լավ խմել էր: Արտասակը ցուցադրա-
 բար *չրեց դեմքը*՝ չի էլ ամաչում, ընկերները ռազմաճակատում զոհվում են, իսկ ինքը այս-
 տեղ բեք է անում» (Ռեզա Պետրոսյան): «Տարիներ անցան. մի օր Փարիզում այդ մարդը մի
 հասարակութեան մեջ մտնեցավ ինձ բարև ելու: *Ես երեսու շուտ տվեցի*, նրա ձեռքը մնաց
 կախված օդի մեջ...» (Շիրվանզադէ): Կառույցների մի մասում շարժումն ավելի մանրա-
 մասն է հիշատակվում. բառակապակցությունները միմյանցից տարբերվում են զանազան
 լրացուցիչ բաղադրիչներով, որոնք ցույց են տալիս շարժման ուղղությունը՝ հետ, մի կողմ,
 անդին, դեպի պատը (պատին): Ինչպէս. «Հրամանքդ ո՞ր ես գնում: Որպէսզի դիրքիս աւս-
 տիճանիս պատիվը պահած լինեմ, գոռոզաբար *երեսու հակառակ կողմը դարձրած* պատաս-
 խանեցի.- Գնում եմ Երանոս գյուղը» (Պերճ Պոշչյան): «Է, Հասան փաշան ալ գիտե՞ս ով
 է: *Երեսը պատին դարձուցած* պանդուխտը արհամարհանքով մը մոմոաց.- Է, ես ի՞նչ
 գիտեմ ով է, շունեն շատ Հասան փաշա կա» (Արթիւր Արթիւրյան): Նշենք նաև, որ այս
 շարժույթը կարող է գործածվել ոչ միայն ներկա հաղորդակցի, այլև մի երրորդ՝ քացակա
 անձնավորութեան հասցեին: «Նրան թվում էր, որ ամուսինը այդ մարդու դէմ խոսում է նա-
 խանձից դողոված: Մի անգամ Գայանեն մի այդպիսի ակնարկություն արեց: Բարաթյանը
 բարձրաձայն ծիծաղեց և *երեսը հետ դարձրեց*, քայց նրա արհամարհանքը դեպի Գիմաթ-
 պանը նկատելի էր՝ արվեստական է դառնում» (Շիրվանզադէ): «Ի՞նչ է աղջկանը անունը,-
 հարցնում է: - Վիկտորյա Գանինյանց,- ասում եմ,- գրադարանի աղջիկը: Էդ մարդը *երեսը
 շուտ տվեց* հանկարծ: - Նա՞ է անմեղը,- ասում է,- որ անմեղը նա է, քա մեղավորն ով է»
 (Ստեփան Չոքյան):

«Մեջքը դեպի մեկն անել» շարժույթը կեցվածք է, որպէս այդպիսին տեսական բնույթ
 ունի և կատարմամբ անհամեմատ մեծ ծավալի է: Ըարժաստղը, կանգնած կամ նստած դիր-
 քում, մեջքը շուտ տալով դեպի համապատասխան անձնավորությունը, շարունակում է մնալ
 նույն վիճակում, որը արհամարհանքի արտահայտման շատ շեշտված միջոց է: Ըարժույթը
 հայերենում արտացոլված է առնվազն երեսուս բառային միավորներով: Կայուն բառակա-
 պակցությունների մեծագույն մասում գերակա անդամ են՝ թիկունք, կոնակ, հետև, մեջք գո-
 յականային բաղադրիչները. քայականներն են՝ անել, դարձնել, շուտ գալ, շուտ տալ: Այսպի-
 սով, շարժույթը ներկայացվում է հետև յալ կերպ՝ թիկունք անել, կոնակը դարձնել, հետև ք մե-
 կի կողմը շուտ տալ, մեջքով շուտ գալ դեպի մեկը: Կարող են լինել նաև լրացուցիչ բաղադրիչ-
 ներ՝ մեկի կողմը, դեպի մեկը (մեկին)՝ թիկունքը մեկի կողմը դարձնել, կոնակով դեպի մեկը
 դառնալ, հետևը մեկին անել, մեջքը դեպի մեկն անել, մեջքը մեկի կողմը շուտ տալ և նման
 գուրդրություններով այլ կառույցներ: Օրինակներ. «Աչքը դիպավ Մարտիսյանին, և հեզ-
 նեց.- Բարեհաճեցի՞ր, աղա բրիգադիր: Եվ հենց բրիգադիրի ժպտացող քթի տակ *թիկունք ա-
 րեց*» (Մուշեղ Գալշոյան): «Խաչիկ. Լսեք, լսեք՝ ինչ խոսքեր եմ ասել: Բազրատը... վերցնում
 է արտը և *թիկունքը խաչիկին շուտ տված* նստում» (Ժորա Հարությունյան): «Վահրամը մո-
 տեցավ կրկին գյուղատնտեսին.- Մեզ կարծակեւ հիմա իսկ: - Ես ձեզ հետ չեմ խոսում,- ը-
 սավ գյուղատնտեսը խիստ ու *կոնակը դարձուց*» (Վազգեն Շուշանյան): «Թերլեմեզյանը
 նստեց կնոջ ցույց տված արտին՝ *մեջքը ցուցադրաբար Զեվդետ փաշայի կողմն արած*,
 իբր նրան չի էլ նկատում: Այդ քացահայտ արհամարհանքից խոցված՝ փաշան չկարողա-
 ցավ նստած մնալ» (Չարգանդ Գարյան): Ըարժույթը ներկայացվում է նաև առանց գոյա-
 կանային բաղադրիչների՝ միայն քայերով՝ շրջվել, շուտ գալ: «Մտնում է Խաչիկը: Խաչիկ.
 Բազրա՞տ, Աշխե՞ն, ի՞նչ եմ լսում: Բազրատը ցուցադրաբար *չրջվում է*: Տո ես որ քո ստուգե-
 րով... շահեի...» (Ժորա Հարությունյան):

2. *Գարշանքի զգացում*: Այստեղ մենք նկատի ունենք այն հոգեվիճակը, երբ զգայա-
 բաններով ընկալելով իրազեկումները՝ անախորժ հոտը, անհաճոտ տեսքը, հատկապէս տհաճ
 համր և այլն, պատճառ են դառնում դիմագծերի աղավաղման: Նույնպիսի վիճակ կարող է

առաջ գալ նաև անցանկալի, հարգանքից զուրկ անձնավորության հետ անմիջականորեն շփվելիս կամ հեռակա կարգով նրա մասին խոսելիս, հիշելիս: Արհամարհանքի առարկան ենթազիտակցողներն գուժոքովում է նշված իրազեկումների հետ ու հանգեցնում նույնանման արձագանքի: Գարշանքի հիմնապատճառը ծնունդ է ավել արհամարհանքի երեք դիմախա-դային շարժույթի՝ «բերանը ծռել», «դեմքը ծամածռել», «քրել»:

Առաջինը համեմատաբար փոքր ծավալի է, տեղայնացված՝ ընդգրկելով շրթունքներն ու քիթը: Ընդհանրացնելով այս դիմախաղի զանազան դրսև որումները՝ նկարագրենք հիմ-նական տարբերակը շրթունքների անկյունները կախվում են, շրթունքները թեքվում, երկա-րում են մի կողմի վրա, միաժամանակ ձգվում, ծռվում է նաև քիթը, աչքերը շուտ են գալիս նույն ուղղությամբ: Հայոց հնչյունական լեզվում շարժույթն արտացոլված է զանազան ման-րամասնություններով, ըստ մասնակից մանրամասների և դրանց շարժման նրբերանգների: Նկարագրող կայուն բառակապակցությունների մի մասը կազմված է գոյականային «բե-րան» անդամից և ծռել, ծամածռել, ծռկաել, ծռնոտաել, ծռոռել, ծռնոտակել, ծռմրակել, ապա նաև՝ աղավաղել, ձգվել քայական բաղադրիչներից: Այսպիսով ունենում ենք՝ բերանը ծռել, բերանը ծռոռել, բերանի անկյունները ձգվել, բերանն աղավաղվել և այսպես մյուս գուժոք-դությունները: Օրինակներ. «Գուք, ինչ է, թո՞նդ կպար Նուշիկի հետ, - ... հարցրեց նա: Գուր-զենը ... բերանն արհամարհանքով ծռեց. - Գատարկ բան էր» (Անժելա Մտեփանյան): «Տե-փո, բարեկամ, եղ-պանիք չե՞ս առին: Գալուսա. Եղ-պանի՞ր... (բերանը ծռոռելով) Ինչի՞ս է պետք» (Դերենիկ Գեմիճյան): Կայուն բառակապակցությունների մի այլ մասում «բե-րան»-ի փոխարեն հանդես է գալիս «շրթունք» բաղադրիչը կամ նրա հոմանիշներից մեկը՝ շուրթ, պոռչ, պոռունկ. քայական անդամները նույնն են: Երբ դիմախաղը կատարվում է ավե-լի փոքր ծավալով, մասնակցում է մեկ շրթունքը. արտացոլող բառակապակցություններում այս գոյականային բաղադրիչը լինում է եզակի կամ հոգնակի բովով, որով ունենում ենք՝ շրթ-թունքը ծռել, շրթունքները ծռոռել, պոռչը ծռել, պոռչները ծռոռել, պոռունկը ծռոռկել և նույնա-տիպ այլ բաղադրիչային գուժոքություններ: «Դիփ քարվանսարի քազագների աղչկերքն են ու կնիկները, - հարեց տիկին Մոփիոն, շրթունքը արհամարհական ծռելով» (Շիրվանզա-դե): «Այնուհետև մենք միշտ միասին կլինենք... Տիրայրը շուրթը ծռոռեց... - Մեր հարևաննե-րը շատ օգնեցին ինձ... Լավ կլիներ շնորհակալություն հայտնելիք: Չէ մի... - Տիրայրը շուր-թը դարձյալ ծռոռեց» (Ալեքսանդր Աբաբանյան): «Նարզիզ. (հեզմակալ): Ուրեմն դուք հիմա հանքատեր եք, հա... Աբաբանյան. - Այո, տիկին: Նարզիզ. (շրթունքները ծռոռելով) Ահա թե ինչ...» (Շիրվանզադե):

Եվ մի երբորդ դեպքում էլ դիմախաղն անվանելիս հիշատակվում է «քիթ» մարմնամա-սը, երբեմն միայնակ, երբեմն մասնակից մյուս մարմնամասերի հետ՝ քիթուրերան, քիթ ու պոռունկ, քիթ-մոտր: Օրինակ. «Եթե կոնսիլիումը անհրաժեշտ համարի վիրահատել, հո չե՞ք փորձի ինքներդ: Իսկ մեր բժիշկները, դե... Նա մտեղ քիթը արհամարհական ծռեց, այսինքն՝ նրանց ձեռքի հունարը գիտեց» (Անժելա Մտեփանյան): «Ադա Ասատուր, մի՞թե աղջկանդ ռուսի կտաս. հայությունը կմոռանա: - Ըստ պետք է ինձ քո հայությունը, - ասաց քիթ պոռունկը ծռոռելով Ասատուր աղան» (Ռաֆայել Պատկանյան):

«Դեմքը ծամածռել» շարժույթը, որը նախորդի հետ, ինքնին հասկանալի է, ընդհանրու-թյուններ ունի, շատ ավելի մեծ ծավալի է. ընդգրկվում են ծնոտները, այտերը, աչքերը, հոն-քերը: Աբառահայտում է այլ իմաստներ ևս՝ անախորժություն, դժգոհություն, զզվանք, ծաղր, վախ, բարկություն և բացասական ուրիշ զգացումներ: Դիմագծերն ու երեսի քնական ար-տահայտությունն աղավաղվում է, խաթարվում՝ դեմքի մասերի անբնական շարժումների, թեքումների, դիրքերի ձև երով: Կատարվում է մի շարք տարբերակներով, որոնք, կախված պատճառից և արտահայտվող իմաստից, միմյանցից զանազանվում են դիմաշարժի մասշ-տաբով, սաստկությամբ և գլխավորը՝ դեմքի մասերի, մկանների ընդգրկմամբ: Դիմախաղն արտացոլող կայուն բառակապակցությունների մի մասում գոյականային գերակա անդամն է «դեմք», մի այլ մասում՝ «դիմագծեր» և ուրիշներում էլ՝ «երես» բաղադրիչները: Բայական անդամները նույնն են, ինչ և նախորդի արտացոլման դեպքում: Այժմ օրինակներ գեղար-վեստական գրականությունից: «Գալադ... - ասում է հորեղբայրս խաչը երկարացնելով և դեմքն այնպես է ծամածռում, այնպիսի արհամարհանքով, որ հայրս չի համբերում, ճիպուտը ձեռքն գնում է դեպի նա՝ աչքերն արյունով լցված» (Մտեփան Չոբանյան): «Սիրուշն արհա-

մարհանրով դեմքը ծամածռում է.- Եղ արտասահմանի մարդիկ բոլորն էլ երկերեսանի են» (Անժեյա Ստեփանյան): «Շենքի վրա երևաց Մարթան... - Տա՛նն է,- հարցրեց նա, *դեմքը ծամածռելով այնպես*, որ այրին հասկանա, թե խոսքը Անտոնիննա Իվանովնայի մասին է:- Աստված ոչ գիտե,- պատասխանեց մայրը դառնությամբ» (Շիրվանզադե): «Վույ բու գըլ-խուն,- ասաց մայրը *երեսը ծռնոված* ու արհամարհանքով ձեռքը բախտաբախով որդու գլխի վրա.- չորան կլինիս, չորան...» (Ռաֆայել Պատկանյան):

Այս լամբի երբորդ է վերջին շարժումըն է՝ «թել», որտեղ, ի տարբերություն նախորդների, գարշանքի գզացումն արտահայտելու եղանակը բարդավիճ ուրիշ է: Գործողությունը կատարվում է անախորժություն առաջ բերող նյութերը օրգանիզմից դուրս մղելու, հեռացնելու ներքին ցանկությամբ, ինչպես որ գործնականում էլ տեղի է ունենում համապատասխան իրողությամբ դեպքում: Այստեղից էլ շարժույթի նախնական երկու իմաստները՝ 1. զզվել, 2. գայրանալ է ապա՝ 3. անարգել, խայտառակել, 4. արհամարհել:

Շարժույթը կատարվում է երկու տարբերակով. մի դեպքում ունենք դիմախաղ, երբ թուրք միայն դուրս են բախում բեքանից, երկրորդ դեպքում դիմախաղին հաջորդում է մարմնաշարժանքը. շարժատողը թքում, ապա ոտքը վրան է քսում, երբեմն մի կողմ շուտ գալով: Հայերենում արտացոլված է թե առանձին բառերով, թե հարադիր քայերով՝ թքել (թքնել), թքոտել, թքակոծել գոյականային ինքնուրույն բառեր՝ թքակոծում, թքոտում, թքում. քայց նաև քայեր՝ թքակողմ անել, թքակոծ անել, երեսին թքել, վրան թքել, թքել ու ոտքը վրան քել: Օրինակներ. «Ամենալկտի դասայիքներից մի բանիսին վոնդենք:- Դա անհնարին է,- մտացրիվ պատասխանեց նա,- մենք չենք կարող մեր հայ հայրենակիցներին ուղարկել մահվան գիրկը:- Հայ հայրենակիցներ՝, Չառուշ Նուրհանը *արհամարհանքով թքեց*» (Ֆրանց Վերֆել): «Անթացուպեքը թե ի տակ մտնում է մեր պալատը:- Վայ տղերք, թուրք ասկյարը, թուրք ասկյարը... - նկատում են վիրավորները: Ոմանք երեսները շուտ են տալիս ու *թքում*» (Հարություն Մկրտչյան): «Վարպետը քրոջ աղջիկը պիտի առնե եղեր... Տային, իբրև արհամարհանքի գերագույն արտահայտություն, *մեկ կողմ կղառնար, կքրներ և ոտքը վրան կրսեր, թու... աղջկանը մեղք չէ՛...»* (Չապել Եսայան):

3. *Անկույթ կեցվածքով շփում:* Ընտանեկան կամ ընկերական միջավայրից դուրս կողմնակի մարդկանց կամ պաշտոնակիցների հետ անկույթ կեցվածքով, ոչ լքջմիս պահվածքով շփումը նույնպես հարգանքի պակասի վկայություն է, ինչպես շփումից հրաժարվելը: Այնպես, ինչպես իբրև կարելի է պահել տանը, մտերիմների շրջանում, հանգստի ժամանակ, պատշաճ չէ ուրիշ վայերում, ուրիշների ներկայությամբ: Այս տեսակետից հանրության գիտակցության մեջ տարբորշված է կեցվածքի երեք ձև, որոնց դիմում են, իբրև արհամարհական վերաբերմունքի արտահայտման շարժումներին:

«Պատկել (շարունակել պառկած մնալ)»: Կեցվածքը հանդիսում է հինգ տարբերակով. ա. պառկել ամբողջովին (հասակով մեկ), ոտքերը տաքածել: բ. Պատկել՝ ձեռքերը գլխատակին: գ. Պատկել՝ ոտքը ոտքի վրա: դ. Թեք ընկնել (մի կողքի վրա հենված պառկել կամ կիսապառկել): ե. Արմնկել, արմունկի, թե ի (արմունկներին, թե երին) հենվելով կիսապառկել: Շարժույթի հիմնական իմաստն է՝ հանգստավետ, հարմար դիրք ընդունելը, ուստի մանրամասն քննության առնելը նպատակահարմար է հենց այս իմաստի հոմանիշների շարքում: Այստեղ, արհամարհանքի արտահայտման կապակցությամբ, ասենք միայն հետևյալը: Տանը ևս կողմնակի մարդկանց ներկայությամբ, հյուրեր գալու դեպքում շարունակել պառկած մնալը, ըստ բարեկիրք վարվեցողության կանոնների, պատշաճ չի համարվում, ուստի դիտվում է իբրև արհամարհանքի նշան: Պատճառը հարգելի լինելու դեպքում պառկածը ներողություն է խնդրում ներկաներից, բացատրություն տալիս: Որպես շարժույթի ծայրագույն շեշտված դրսևորում, դրան են դիմում հանրային վայերում, ընդհանուրի ներկայությամբ: Բնականաբար, կատարման սաստկության այս աստիճանը խիստ հազվադեպ է լինում: Որպես օրինակ հիշենք Պ. Պոռչյանի «Հացի խնդիր» վեպից մովրովին՝ մեղանշածներին պատժելիս: «Ռոզգի...,- ձեն ա տալիս մովրովը: ... Իք բակի դռան մեյդանումն իք կատավաքը դնել ա տալիս ու սող խալխի միջին *թեք ընկնում ձգվում*»:

Ոտքը ոտքի վրա գցել: Դարձյալ տնային միջավայրում կամ միայնակ լինելիս հանգստի, անկույթորեն նստելու կեցվածք է: Վերջին հանգամանքն առանձնապես աչքի է զարնում կանանց կողմից կատարվելիս: Ծնկից ծալած մի ոտքը դրվում է նույն կերպ ծալած

մյուս ոտքի ծնկին կամ ծնկին մտա՝ քիչ վերև: Հակապատկերն է նստելու պատշաճավոր դիրքը (նստել ուղիղ, առանց հենվելու սեղանին կամ աթոռին. թաթերն իրար մոտիկ. ավելի լավ է՝ ոչ ամուր խաչաձև ել, որովհետև հարմար չէ ոչ ոտքերը լայն քացելը, ոչ էլ ծնկներն իրար սեղմելը): Կիրք վարվեցողության այս կանոնն անտեսելը և ոտքը ոտքին նստելը որոշակի պայմաններում նշանակում է անհարգալից վերաբերվել ներկաներին:

«Ոտքը ոտքի վրա գցել» շարժույթը հայերենում արտացոլված է առնվազն քսան կառույցներում: Բայական բաղադրիչներն են՝ գցել, դնել, ձգել, նետել. գոյականային գերակա անդամներն են մի մասում՝ ծունկ, ծունկը ծնկանը դնել, (ծնկի վրա դնել), ծունկը ծնկին դնել, ծունկ-ծնկի դնել. քիչ դեպքերում՝ սրունք (սրունքները իրար վրա նետել). մեծագույն մասում՝ «ոտք» (ոտքը ոտքին դնել, ոտքը ոտքի վրա ձգել, ոտքը ոտքի վրա նետել) և այլն: Օրինակներ. «... շարունակել էր պատրոնից կիցը, ներս առնելով էրկանը աշխատավորին... Ու սիգար մը բերանին՝ ոտքը ոտքին նստել էր Օհան աղայի դեմ...» (Սոնա Թնկլըրյան): «Մոս Մինասիչ, երեկ ո՞նց էիր նստած գործկանում: Դու, ափսոս, քեզ չէիր տեսնում: ... Բա որ ոտքդ գցեցիր ոտքիդ ու նայեցիր նախագահին...» (Վարդգես Պետրոսյան): «Միքայելն ... լսելով վերջին խոսքերը, նայեց նրա երեսին, նստեց դեմուղեմ և ոտք ձգելով ոտի վրա, ասաց.- Ամոք չլինի հարցնելը, ի՞նչ բաժնի մասին ես խոսում» (Շիրվանզադե): «Բարխուդարովը խոսում էր հանքերի կառավարչի հետ՝ նստած ֆիկնաթոռի վրա, ամբարտավան կերպով ոտք ոտի վրա նստած» (Վահան Թոթովենց):

«Ճեղքերը գրպանները դնել»: Այս կեցվածքը մեզանում անհարգալից է համարվում աշխատավարյուն պաշտոնակիցների, հասարակության մեջ՝ նաև հասակակիցների շփոմների ժամանակ: Հատկապես ընդգծվում է, երբ հաղորդակցվում են կրտսերը՝ ավագի, տղամարդը՝ կնոջ, ցածր կարգավիճակում եղողը՝ քարձր կարգավիճակում եղողի հետ: Արհամարհանք արտահայտելը շարժույթի չորրորդ իմաստն է, որը, բնականաբար, գալիս է նախորդ իմաստից՝ անհոգ, անփույթ տրամադրության մեջ լինել (ձեռքերը գրպանները դրած՝ շվշվացնելով ման գալ): Բոլորի համար նախնականը առաջին իմաստն է՝ հանգառավետ, հարմարավետ վիճակում իրեն զգալ: Շարժույթը հայերենում արտացոլված է քսանհինգից ավելի կառույցներով: Կատարման աստիճանական աստիճանի դեպքում ձեռքերը գրպաններն են դրվում մինչև դաստակները կամ ավելին. թույլ աստիճանի դեպքում գրպաններն են դրվում մատները կամ մատների ծայրերը: Ըստ այսմ էլ, բառակապակցություններում գոյականային գերակա անդամն է՝ կամ «ձեռքերը», կամ «մատները». գոյականային երկրորդ բաղադրիչն է՝ «գրպաններ»՝ ուղղական, նաև ներգոյական հոլովով (գրպաններում). գոյականային երրորդ բաղադրիչը, որը կառույցների մի մասի կազմում կա, ուրիշներում՝ չկա՝ և պարտադիր չէ, ցույց է տալիս հագուստի տեսակը՝ վերաբերու, պիջակ, անդրավարտիք... Բայական անդամները բազմազան են՝ դնել, խթել, խրել, գրպանել, խցկել, մտցնել, տանել, կոխել: Այսպիսով, ունենում ենք. ձեռքերը վերաբերուի գրպանները դնել, ձեռքերը գրպանները խթել, ձեռքերը գրպաններում դնել, մատների ծայրերը գրպանները խցկել, մատները գրպանները մտցնել և նման ուրիշներ: Բերենք երեք օրինակ Շիրվանզադեի «Քառս» վեպից, որտեղ կեցվածքը հաճախ է հանդիպում՝ ցույց տալով արհամարհանքի արտահայտումը տարբեր իրավիճակներում ու վայրերում: Գրիշան ընկերների ներկայությամբ ապուսակել է Միքայելին. վերջինս կատաղած է: «Գրիշան ստոն էր և արհամարհանքով նայում էր հակառակորդին, ձեռքերը վարտիքի գրպանները դրած: Միքայելը գոռում էր»: (Էջ 195): Ռեստորան. Մմբատին ցանկանում են ներքաշել սկանդալի մեջ: «Նրա սեղանին մտնեցավ մի հարքած երիտասարդ, ... ձեռները վարտիքի գրպանները դնելով, հայացքը հառեց Մմբատի երեսին: Պետրոս Կուլամյանի քրոջ որդին է, քաղաքի առաջին սկանդալիստը: Հանկարծ հարքածը գռչեց.- Դուք ի՞նչ փիլիսոփայություն եք անում ազնվության մասին»: Ինչպես է վերաբերվում պատանի Արշակը իր այրի մորը: «... Մտավ մոր սենյակը այն ժամանակ, երբ այրին նոր էր հագնվում:- Մտող վտղ կա՞,- հարցրեց նա, ձեռները վարտիքի գրպանները դնելով»:

4. Այս շարժույթը շարժանը է՝ «ձեռքը թափահարել»: Մեծ մասամբ աջ ձեռքը սահում ու թեթև դաստակից թափահարվում է վերից վար. ափն ուղղված է դեպի ցած: Այս կերպ շարժառողը կարծես ցրում, թրթափում է իրենից այն, ինչ անկարևոր, անարժեք է համարում: Շարժանը հայերենում արտացոլված է նվազագույնը 15 կառույցներով, որոնցում ամենուրեք գերակա անդամը «ձեռք» գոյականային բաղադրիչն է. բայական կառույցներում

բայական անդամներն են՝ բառահարել, բառի տալ, բոբախել, ճոճել, շարժել (ձեռքը բառի տալ, ձեռքը բառահարել, ձեռքը ճոճել): «Քանի գնում հազը ներում էր նրան, և եք բարեկամները նորից ու նորից խորհուրդ էին տալիս՝ գնալ բուժվելու, նա ձեռքը բառի էր տալիս դարձալ».- «Ե, այդ ոչ ինչ...» (Ստեփան Ջորյան): «Պատավական գրույցներ... - ձեռքն արհամարհանքով շարժեց Ամիրյանը,- կնոջը լուր հայտնիք ու քսց բող... Կզործի անթել հեռագրից արագ» (նույնը): Որոշ կառույցներում կան նաև լրացուցիչ մանրամասնող բաղադրիչներ՝ վերևից-ներքև, վերից-վար, օդի մեջ (օդում): «Արդյոք իրիկվա անհաճո դասախոսություն՝ ո՞նց ազդեց, քե մրսել էք,- հետաքրքրվեցի ես,- նստելով:- Էհ,- մրմնջաց նա ձեռքը վերմակի տակից հանելով ու բոբախելով օդի մեջ,- բող ինչ ուզում են խոսեն: Բանարկուներ շատ կան աշխարհում» (Շերուն Թորգոմյան): «Ահ,- գոչեց ուղեկիցս ձեռքն արհամարհանքով բոբախելով օդի մեջ,- ես զինվորականներիցն ստելով առում եմ: ... Եթե գիտենայի, ուրիշ կուպե կվերցնեի» (Շիրվանգադե): Կան նաև գոյականային բառակապակցություններ՝ ձեռքի բառահարում, ձեռքի ճոճում. «Մեղիք, ազնվական, ուսումնական... պատասխանեց Մարկոս Լֆենտի ձեռքի արհամարհանա ճոճումով մը, դրանով փոք չի կշտանա, ասիկա ունի՞,- և ... աջ ձեռքի քրամատը ցուցամատին շփոփեց» (Երվանդ Օռյան):

Գ. *Չարությանը, բարկությանը շփում:* Խմբում առանձնացնում ենք մեկ շարժույթ: Հարդրակիցների հարաբերություններն այն աստիճան սրված են, անբարյացակամությունն այնպիսի պատճառներ ունի, որ առաջ են քերում բարկանալու, շարք ցանկանալու տրամադրություն: Սա մեր շարժատության մեջ արտահայտվում է «չանչ անել (չանչել)» շարժույթով: Հինգ մատները լայն քացելով, սափն ուղղելով մեկին՝ ձեռքը բառիտալ դեպի նա: Շարժանքի այս առաջին իմաստը հիմնապատճառ է դարձել երկրորդ իմաստի՝ արհամարհանքի համար, որի դեպքում քերածի ուղղումն ու քերագնահատումը կարող են բարկության հետ խառը լինել կամ չլինել: Անխառն արհամարհանքը, ինչպես միշտ, հիմնապատճառին հարողոր, ավելի ուշ ժամանակների արդյունք է:

Այս շարժույթը հայերենում արտացոլված է առնվազն 35 բառային միավորներով՝ քե առանձին, ինքնուրույն բառերով, քե կայուն բառակապակցություններով: Նախ՝ կան մանրամասներով նկարագրական բայական բառակապակցություններ, ինչպես հետևյալ օրինակներում: «Տիկինը յուր աջ ձեռքի հինգ մատները քսց արավ, բառի տվեց օդի մեջ երեք անգամ դեպի յուր ամուսինը և ասաց խորին արհամարհանքով.- Առա է, առա է, տառիք մտնի քեզ նման վարժապետը, տառիք» (Շիրվանգադե): Քանի որ չուսմ մատներով ձեռքի քսքը այլ կերպ կոչվում է «չանչ», նաև՝ ճանկ, բոբոլա, բարա, այդ բառերը նույնպես կարող են բառակապակցությունների բաղադրիչներ լինել: «Ի՞նչ ես ծիծաղում, Թամար խանում, չեմ իմանում... - Էլ քո տերտերից հի՞նչ ես տրվալ... - պատասխանեց Թամարը, աջ ձեռքի հինգ մատները քսց անելով և ինձ ճանկ անելով» (Շիրվանգադե): «Վանեցի 80-ամյա Վանոն նայում է նրա հետևից:- Ամա քե աղջիկ ի: Էրնեկ էնոր գիրք ու ծոց անողին: Հարևանուհին՝ Երանուհին, ձեռքով չանչում է նրա կողմը.- Տեսեք, է, տարիքից էլ չի ամաչում» (Մկրտիչ Սարգսյան): «Ինչ անիմ, որ սիրում է... - Էհ, հողեմ քու առատուց գլուխը... Ինքն էլ չէ գիտի, ինչ է խառում,- Պատասխանեց Նիկոլային քրքրա տան տալով Նատոյի երեսին» (Բաֆֆի): Շարժանքը կարող է արտացոլվել նաև ծավալում նկարագրություններից դուրս՝ առանձին բայերով կամ հարադիրներով՝ չանչել, չանչ անել, ճանկ անել: «Նախշում- (չանչ անելով): Առ է, ցնդած բոլելչիկ: Աչքդ էլ հանեն, էլի կասես ոչ ինչ: ... Թորոս- Դե հնարավորություն չի եղել՝ չեմ արել: Նախշում- (չանչ անելով): Առ է: Յուրաղու նայելու համար Թիֆլիս, Բարու գնալու միշտ հնարավորություն կա, մերենա առնելու չկա, հա...» (Արամաշտա Պապայան): «Հազիր ասա, շնորհին էիր անում: Էլ կասես, առա ա՞, ... Կինը ձեռք խլեց նրա ձեռի միջից և չանչեց նրան:- Ի՞... հողեմ գիժ գլուխդ» (Նար-Դոս):

Շարժանքն առաջին իմաստով նշանակում է՝ մահ, հոգին առնելու համար գրող ցանկանալ: Այստեղից էլ նրա բառային մեկ այլ արտահայտումը՝ «գրող չափել» կամ որ նույնն է ժողովրդախոսակցական լեզվում՝ «բարա չափել»: «Աքիրը դժգոհ փնթփնթաց.- Պատավել ես, խեղդե ետ մանել: Էդ խոսքերը Ղազար պապի սրտին դիպան:- Պատավ, հերիք է Ալբարաչի պես հարձակվես ինձ վրա- Ի՞հ,- գրող չափեց արիքն ու դուրս եկավ խրճիթից» (Արաքս): Ունենք նաև գոյականային բառեր՝ բարա, գրող, մեհիկ, մրճիկ, ճանկ, չանչ: Վերջապես, սաստկության ուժգին աստիճանում շարժույթը կատարվում է երկու ձեռքով. վերջին երկու

բառերն այդ դեպքում ավելանում են արտացոլող քառակապակցության կազմին: «Մարթա, նույն միջոցին հյուրերին: Մենք էլ ի՞նչ ինք շինում էստի... քա (երկու ձեռքով չանչ ուղարկելով Սալամենի ու Խախոյի կողմը): Լավ անուն դուք վեր արիք» (Գարրիել Սունդուկյան):

Այսպիսով, մենք քննության առանք արհամարհանքի տասը շարժույթ, որոնք սույն հոդվածում ըստ առաջացման հիմնապատճառի բաժանեցինք չորս խմբի. 1. գարշանքի զգացումով շփում, 2. հրաժարում շփումից, 3. անհույս վերաբերմունքով շփում, 4. չարություն, բարկության շփում: Ստորև տալիս ենք ներկայացված շարժույթների ցանկը, ըստ շարժումային լեզվի դրսևորման միջոցների.

Շարժանք. «Գեմք մեկից մի կողմ դարձնել», «ձեռքը քափահարել», «չանչ անել»:

Կեցվածք՝ «Պատկած մնալ՝ կողմնակի մեկի ներկայությամբ», «ձեռքերը գրպանները դնել», «տարք ոտքի վրա գցել», «մեջքով շուռ գալ դեպի մեկը»:

Դիմախաղ՝ «բերանը ծռել», «դեմքը ծռռել», «քթել»:

Սակայն արհամարհանքի շարժույթները սրանցով չեն վերջանում. մնում են դարձյալ տասի չափի որոնք թվարկելով կսահմանափակվենք, որովհետև քննության առնելը նպատակահարմար է դրանց հիմնական, շատ ավելի տարածված իմաստների հումանիզների շարքում. «գլխին բանիել», «գլխին կտտացնել», «քթի ծայրին կտտացնել», (ծաղր). «քե երբ մեջքին ծալել», «ձեռքերը կողքերին կանթել» (1. Հանգստավետություն: 2. Ինքնավստահություն). «բթամատով ու 3-րդ մատով շրխկացնել (մեղեդու կշռույթը պահել). «երեք մատի կոնքինացիա ցույց տալ» (կոպտորեն մերժել). «ժպտալ», «ծիծաղել» (ուրախանալ):

Е. У. ГЕВОРКЯН- Пренебрежение в армянской кинемической синонимии. - В процессе общения членов коллектива соответственно формам поведения формируются определенные взаимоотношения. Они могут быть положительными, отрицательными, нейтральными, выражаться разными способами, в том числе вербальным и кинетическим языками. В статье рассматриваются кинемы, выражающие одно из проявлений отрицательного отношения, когда один из членов коллектива, не уважая другого члена коллектива, недооценивая его, не придает должного значения его качествам, действиям, т. е. пренебрегает им. В жестикологии пренебрежение может быть выражено разными способами, каждый из которых имеет свое обоснование, обусловленное этим отношением, имеет свои специфические кинемы. В статье выдвинуто пять оснований: отказ от общения, общение с чувством отвращения, общение с небрежным отношением, общение с гневом.

В статье рассматриваются двадцать кинем, а также их отражение в армянском языке с помощью слов и словосочетаний.